ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՂԱԲԱԼՅԱՆ Վ. Ռ.

Ցանկացած պետություն, նախքան պատերազմ սկսելը, պարտավոր է իրեն հաշիվ տալ, թե ընդունա՞կ է արդյոք հաղթահարելու հետպատերազմյան համախտանիշի ավերիչ հետևանքները, որոնք առավել հաճախ գերազանցում են անգամ հաղթանակի արդյունքները, և այդ հետևանքների վերացման համար, որպես կանոն, շատ ավելի երկար ժամանակ է պահանջվում, քան պատերազմի նյութական մնասների վերականգնման համար՝ սովորաբար դառնալով մեկ սերնդի ուժերից վեր գործ:

Գիտական գրականության մեջ և առօրյա կյանքում հետպատերազմյան համախտանիշը (ՀՊՀ) առավել հայտնի է վիետնամական և աֆղանական, իսկ վերջերս էլ չեչենական ու անգամ ղարաբաղյան համախտանիշ անուններով, որոնք, սակայն, որոշակիորեն սահմանափակում են խորապես արմատավորված սոցիալական այդ երևույթի ընկալումը՝ մասնավորեցնելով և տեղայնացնելով այն որպես կոնկրետ պատերազմի հետևանք: Սակայն ցանկացած բնույթի կամ նպատակի համար մղվող պատերազմում ՀՊՀ-ի ծագման ու զարգացման օրենքներն ու օրինաչափություններն ընդհանուր են, և բոլոր դեպքերում այն գործում է դրանց համապատասխան և ի հայտ դալիս իրեն յուրահատուկ կողմերով: Ուստի ավելի տրամաբանված և արդարացված է ՀՊՀ-ի ընդհանուր, գիտականորեն հիմնավորված ձևակերպումը, քան միայն տեղային անուններով վերջինս պայմանավորելը: Այդ առումով ՀՊՀ-ն բնութագրող հիմնական գործոններն են. ա/ ՀՊՀ-ն ձևակերպելով պատերազմի անունով՝ մատնանշում են այդ պատերազմում ընդգրկված կողմերին՝ աշխարհագրական դիրքով, առանձնահատկություններով ու ծագումնաբանորեն կապելով կոնկրետ այդ պատերազմի հետ, բ/ մատնանշում են էթնիկական գործոնը, կամ ազգային պատկանելությունը, որոնք իրենց պարտադիր կնիքն են դնում ՀՊՀ-ի ծագման, զարգացման ու արտահայտվածության վրա, գ/ գաղափարական, կրոնական, խոսակցական, պատմական և այլ գործոնների առկայությունը, որոնք այս կամ այն ձևով ու չափով ազդում են ՀՊՀ-ի ձևավորման ու արտահայտվածության վրա:

Ուստի պատահական չէ, որ բոլոր տեսություններում գլխավոր ուշադրությունը հատկացվում է պատերազմի անմիջական մասնակցի /ՊԱՄ/ վարքագծի ու հոգեկան գործունեության փոփոխություններին, որոնք ձևավորվում են դերհզոր պատերազմական սթրեսների ազդեցության տակ, ընդհուպ մինչև մարդկանց մեջ հանցավոր նախապատրաստվածության կամ հակումների ստեղծումը, որը ՀՊՀ-ի միակողմանի և ոչ լիարժեք ընկալում ու մեկնաբանություն է: Ի տարբերություն այդ տեսությունների, մեր կարծիքով, ՀՊՀ-ն այնքան խորն արտահայտված /ոչ միայն ՊԱՄ-ը, այլև ամբողջ պետությունն ու հասարակությունը՝ բոլոր բաղադրամասերով հանդերձ ընդգրկող/ սոցիալական երևույթ է, որը որոշակիորեն ազդում է հասարակական հարաբերությունների ձևավորման ու զարգացման, պետական օղակների գործունեության վրա՝ տևական

ժամանակաշրջանում պայմանավորելով դրանց ընթացքը: Ուստի, պատահական չէ, որ, ըստ տարբերություն նախորդ տեսությունների, ՀՊՀ-ի մեր տեսությունը թույլ է տալիս ՊԱՄ-ի հիմնահարցի վերաբերյալ հանդել մի կարևոր եզրակացության: Այն է՝ ՊԱՄ-ի մեջ պատերազմական գերհզոր սթրեսների /ՊԴՍ/ ազդեցության տակ ոչ մի հանցավոր հակում կամ նախատրամադրամադրվածություն չի ստեղծվում, ավելին՝ դրա հոգեկան գործունեությունն ու վարքագիծը կարելի է գնահատել միայն հասարակության և պետության վերաբերմունքից բխող կամ նրա հետ շաղկապված, բայց ոչ մի դեպքում առանձին, քանի որ հակառակ պարագայում այն կլինի ոչ միայն թերի, այլև պարզապես սխալ:

ՀՊՀ անվանումն առավել լրիվ է համապատասխանում սոցիալական այդ երևույթի բովանդակությանը, չնայած ունի մի շատ կարևոր թերություն. այն սկսվում է ոչ թե հետպատերազմյան շրջանում, այլ հենց պատերազմի սկզբից և իր զարգացման ու արտահայտման ամենաբարձր մակարդակին է հասնում հետպատերազմյան շրջանում: Բայց քանի որ ՀՊՀ-ն պատերազմի անմիջական հետևանք է, նրա ծնունդը և ունի զարգացման ուրույն օրինաչափություններ, ուստի և նման ձևակերպումն արդարացված է: Ինչ վերաբերում է ղարաբաղյան ՀՊՀ անվանմանը, երբ այն զուգորդվում է վիետնամական կամ աֆղանական ՀՊՀ-ներին, ապա դա առաջին հերթին այդ խոր արմատավորված սոցիալական երևույթի ոչ լիարժեք, թյուրընկալման, հետևապես և սխալ պատկերացման արդյունքն է, մանավանդ որ վիրավորական է տասնյակ հազարավոր ազատամարտիկների, հազարավոր զոհվածների և վերջապես ամբողջ ժողովրդի համար, որոնք իրենց կյանքը նվիրաբերեցին ազգի գոյատևման պայքարին՝ կրելով բազմաթիվ զրկանքներ ու զոհողություններ: Թե՛ ամերիկյան և թե՛ խորհրդային զինվորներին նախ և առաջ պետք էր համոզել այդ պատերազմների արդարացիության և անհրաժեշտության մեջ, որը մարդկային բնականոն արժանիքներով օժտված զինվորների համար այնքան էլ հեշտ լուծվող խնդիր չէ, և նրանց մեջ դրվում է հոգեկան խոր անհարմարության զգացումի, երկփեղկման հիմքը՝ դառնալով մեծ և տևական հոգեկան ցնցման պատճառ: Մինչդեռ, արցախյան պատերազմը հայերիս համար գերազանցապես կամավորականների պատերազմ էր: Փաստորեն, պատերազմի մասնակիցների ճնշող մասը, եթե ոչ ամբողջը, ճակատ են գնացել գաղափարական համոզվածությամբ /այսինքն՝ հոգեկանի գաղափարական հիմնավորմամբ/ ազգային արժեքների, ազգի կյանքի գոյատևումն ապահովելու համար, այլ ոչ թե բռնություն գործելու կամ ուրիշի սեփականությունը բռնագրավելու և սեփական կրքերը բավարարող նման այլ բաների համար:

ՀՊՀ-ի պատմությունը նույնքան հին է, որքան պատերազմների պատմությունը, այն հաջորդել է բոլոր շատ թե քիչ նշանակալի պատերազմներին: Ուստի, ՀՊՀ-ի տեսության ուսումնասիրությունը կարևորություն է ստանում ոչ միայն նրա համար, որ հնարավորություն ընձեռվի այսօր կանխատեսելու, կանխարգելելու և, հետևապես, մեղմացնելու կամ վերացնելու դրա ծանր հետևանքները, այլև այդ տեսանկյունից ըմբռնելու, գնահատելու անցյալի շատ պատմական իրադարձություններ, պետությունների, կայսրությունների, արքայական հարստությունների հիմնադրման կամ փլուզման գործընթացներ:

ՀՊՀ-ի ուսումնասիրությունների համար մեր դիտարկման օբյեկտն է եղել հայ-ադրբեջանական հակամարտությունը, հատկապես դարաբաղյան 1992-1994թթ. պատերազմը, որն իր բնույթով հայկական կողմի համար ազգային-ազատագրական պատերազմ էր՝ ուղղված մեր հայրենիքի տարածքային

ամբողջականության վերականգնմանը և ազգի գոյատևումն ապահովելուն: Զինվորների հոգեվիճակները դիտարկել ենք պատերազմի ամենավաղ ժամանակներից, ներառել նաև հետպատերազմյան շրջանը՝ ընդգրկելով ոչ միայն ՊԱՄ-ին, այլ նաև հասարակության բոլոր խավերին, պետական ու իշխանական օղակներին, ուշադրություն դարձրել ՀՊՀ-ի ծագման և զարգացման հարցերին, օրինաչափություններին, արտահայտման՝ առանձնապես ավարտուն ձևերին, որոնք այդ համախտանիշի անմիջական հետևանք են կամ պայմանավորված են դրանով: Դիտարկման տեսադաշտում, հնարավորության սահմաններում, ընդգրկվել են պատերազմից անհարգելի պատճառով խուսափողները, որոնք ԼՂՀ-ում գործող օրենքների համաձայն պարտավոր էին ծառայել, սակայն հրաժարվելով՝ հեռացել են ռազմի դաշտից: Այդպիսի դեպքերում առանձնակի ուշադրության են արժանացել վերջիններիս հարազատները, հատկապես ՊԱՄ-երի հոգեբանական կողմերը, նրանց գնահատականները հասարակության և պետության վերաբերմունքի նկատմամբ՝ սկսած պատերազմի սկզբնական շրջանից մինչ հիմա:

Դիտարկման կարևորագույն եզրահանգումներից մեկն այն է, որ հայ իրականության մեջ չի եղել շատ թե քիչ նշանակալի մի խավ, դաս կամ հատված, որը կասկածեր պատերազմի անհրաժեշտությանն ու արդարացիությանը, ինչը հետագայում իր ազդեցությունն ունեցավ ՀՊՀ-ի ծագման ու զարգացման վրա:

Դիտարկման տարածքի բավականաչափ սահմանափակ լինելը հնարավորություն է ընձեռել գործնականում ընդգրկել նրա բոլոր ոլորտներն ու շրջանները: Մյուս կողմից, ՀՊՀ-ն այստեղ արտահայտվել է իր բոլոր հնարավոր ձևերով, այսինքն՝ հասարակության և պետության ձևախախտումները խտացված, համակենտրոն և ցայտուն են արտահայտվել, որը ուսումնասիրությունը դարձրել է առավել որոշակի՝ բացառելով կողմնակի գործոնների առկայությունը կամ ազդեցությունները:

Եվ վերջապես, այն հանգամանքը, որ ՊԱՄ-երի գերակշիռ մեծամասնությունը՝ 90%-ից ավելին, կամավորականներ էին, որոնք ռազմաճակատ են գնացել հանուն հայրենիքի, առանց որևէ պարտադրանքի, և խոսք անդամ չի կարող լինել պրոֆեսիոնալ վարձկանների կամ այլ տիպի զինվորականության մասին, հնարավորություն է տվել ՊԱՄ-ի վարքագիծն ու հոգեկան գործունեությունը և դրանց փոփոխություններն ուսումնասիրել բնականոն վիճակում:

Այսինքն՝ գործնականում ունեցել ենք բոլոր կողմերով բացառիկ հետազոտման օբյեկտ, ՀՊՀ-ի ուսումնասիրություն, որի արդյունքները կարելի է ընդունել առանց կասկածի. դրանք ինչ-որ կողմնակի գործոնների միջամտության կամ ազդեցության հետևանք չեն:

ՀՊՀ-ն գերհզոր պատերազմական սթրեսների ազդեցության տակ ձևավորված յուրահատուկ փոխհարաբերությունների բարդ համալիր է, այնպիսի փոխհարաբերությունների, որոնք ծագում ու զարգանում են մի կողմից պատերազմի մասնակիցների և առաջին հերթին՝ անմիջական մասնակիցների և, մյուս կողմից, պատերազմական գերհզոր սթրեսների ներգործության հետևանքով մասնատված հասարակության միջև, դրան նպաստող սոցիալական, մշակութային, բարոյական, կրոնական և իրավական պայմանների առկայության դեպքում՝ անկախ ստացած մարմնական ու հոգեկան վնասվածքներից: ՀՊՀ-ն գերհզոր պատերազմական սթրեսների ազդեցության հետևանքով ձևավորված սոցիալական կացություն է, որն ընդգրկում է տվյալ հասարակության անխտիր բոլոր խավերն

ու դասերը, սեռային և տարիքային խմբերը, հասարակական-քաղաքական կազմակերպությունները, զինվորականությունը, հոգևորականությունը, պետական և կառավարման օղակները: ՀՊՀ-ն ի սկզբանե բացասական երևույթ է, քանի որ ունի նման հիմք՝ ստեղծված գերազանցապես նշված սթրեսների ազդեցության տակ: Նա բացասական ազդեցություն է թողնում հասարակության, պետության և, վերջապես, ազգի ու ժողովրդի վրա, և նրա ծագումն ու զարգացումն ուղղակիորեն պայմանավորված են տվյալ հասարակության բարոյական, սոցիալական, մշակութային, իրավական, կրոնական և այլ գործոնների զարգացման մակարդակով: ՀՊՀ-ն ՊԳՍ-ների ազդեցությամբ ձևափոխված պետության և մասնատված հասարակության առանձին խմբերի հակասությունների ու միասնության պայքարն է, որն արտահայտվում է հասարակական հարաբերություններում և մարդկային ու ազգային արժեքների նկատմամբ ցուցաբերած նրանց վերաբերմունքում:

Սակայն ՀՊՀ-ի ծագման ու զարգացման համար առաջնահերթ նշանակություն ունեն ոչ միայն վերը նշված գործոններն ու կողմերը, այլև պետության և հասարակության նվիրվածությունն ու հավատարմությունն ազգային արժեքներին կամ, ընդհակառակն, քանի որ դրանց անտեսումը նպաստում, խորացնում է ՀՊՀ-ի ծավալումն ու արտահայտվածությունը: Այդ կապը հաստատվում է ամենաուղղակի ձևով: Հաշվի առնելով, որ ազգային արժեքների մեզ հայտնի ձևակերպումները ոչ լրիվ են համահունչ ՀՊՀ-ի տեսությանը, առաջարկում ենք ազգային արժեքների նոր ձևակերպում. Ազգային արժեքը տվյալ ժողովրդի նյութական, պատմական, հոգևոր-բարոյական, մշակութային օբյեկտները, իրադարձություններն ու երևույթներն են, որոնց հիման վրա ձևավորվում ու զարգանում է ազգը՝ միայն իրեն յուրահատուկ առանձնահատկություններով, հույսով և հավատով ապագայի հանդեպ:

Այսպիսով՝ ազգային արժեքը ոչ միայն ազդում, նպաստում է տվյալ ժողովրդի հոգևոր ու նյութական վերելքին, այլև պարտադիր հույս և հավատ է ներշնչում ապագայի հանդեպ: Ազգային արժեքների անտեսումը կամ ոտնահարումը հանգեցնում է ոչ միայն տվյալ ազգի բարոյալքմանը, այլև, որպես անխուսափելի հետևանք, նրա տարրալուծմանը կամ պատմական թատերաբեմից պետության հեռացմանը: Ազգային արժեքը նաև հպարտության, պարծանքի աղբյուր է, որը ոգևորում է ազգը, նպաստում նրա հոգևոր կյանքի առույգացմանը, հետևապես և հասարակական կենսամակարդակի բարձրացմանն ու թարմացմանը:

Ազգային արժեքների անտեսումը կամ թերագնահատումը հանգեցնում են ոչ միայն հասարակության կողմից բարոյական արժեքների վերագնահատմանը, հույսի ու հավատի կորստին, այլև նպաստում տվյալ, կոնկրետ դեպքում՝ ՀՊՀ-ի, սոցիալական այդ չարիքի առավել ցայտուն տարածմանը և խոր արտահայտվածությանն ու, իր հերթին, որպես տրամաբանական զարգացման արդյունք, բարոյական արժեքների խեղաթյուրմանն ու այլասերմանը՝ ամենածանր հետևանքներով: ՀՊՀ-ի ծագման ու զարգացման անհրաժեշտ և պարտադիր պայմանը պատերազմական գերհզոր սթրեսների առկայությունն է, որոնց ազդեցությամբ տեղի են ունենում խոր տեղաշարժեր պետության, հասարակության և անխտիր նրա բոլոր սոցիալական խմբերի, դասերի մեջ: Դաղտնիք չէ, որ արդեն հենց պատերազմի վտանգը հասարակության և պետության մեջ փոփոխությունների հիմք է դառնում, և հասարակության առանձին խմբեր կամ հատվածներ պատերազմի նկատմամբ տարբեր վերաբերմունք և վարքագիծ են ցուցաբերում: Բուն պատերազմի սկսվելով ՊԳՍ-ների ազդեցության տակ սկսվում

է հասարակության տարանջատման, մասնատման, տրոհման մի գործընթաց, որը շարունակվում է ամբողջ պատերազմի ընթացքում և նոր հասարակական հարաբերությունների ձևավորման հիմք դառնում: Այդ սթրեսների ազդեցության տակ, առաջին հերթին, հասարակությունը տարբերակվում է հետևյալ 4 խմբի՝ պատերազմի անմիջական մասնակիցներ՝ պատերազմի մասնակիցներ[1] /ՊԱՄ/, պատերազմի ոչ անմիջական մասնակիցներ[2] /ՊՈԱՄ/, պատերազմի ոչ մասնակիցներ[3] /ՊՈՄ/ և պատերազմի ոչ լիարժեք մասնակիցներ[4] /ՊՈԼՄ/:

ՊՈԱՄ-ը ժողովրդի այն հոծ զանգվածն է, որն այնպիսի ճակատագրական պահերին, ինչպիսին պատերազմն է, ՊԳՍ-ի ազդեցության տակ, մեկ անգամ ևս վերադառնում է իր պատմական ակունքներին, ազգային արժեքներին, հստակեցնում ազգային գաղափարներն ու նպատակները՝ այդ բոլորը մաքրելով կողմնակի կամ երկրորդական արժեքներից ու նստվածքներից:

ՊԱՄ-ը ժողովրդի այն հատվածն է, որը ցուցաբերելով հայրենասիրություն և զրկանքներին դիմակայելու ունակություն՝ իր անմիջական մասնակցությամբ իրագործում է պատերազմի խնդիրներն ու նպատակները՝ իր ամբողջ հոգեկանով և ֆիզիկականով ենթարկվելով ՊԳՍ-ի անմիջական ազդեցությանը: Ուստի և տրամաբանական է, որ նա ազգային արժեքների ու գաղափարների նկատմամբ

[1] Պատերազմի անմիջական մասնակիցները, ցուցաբերելով անձնազոհություն, իրենց գերհզոր ցանկություններն ու զգացմունքները ժամանակավորապես հետաձգելով կամ կասեցնելով, այսինքն, ցուցաբերելով հայրենասիրություն և զրկանքներին ու դժվարություններին դիմակայելու ունակություն՝ հանուն ազգային նպատակների, խնդիրների, արժեքների կամ գաղափարների գնում են պատերազմելու՝ դառնալով պատերազմի նպատակների իրագործողները, այսինքն՝ պատերազմ կրողները:

[2] Պատերազմի ոչ անմիջական մասնակիցներն իրենց անձնազոհությամբ և հզոր զգացմունքների ու ցանկությունների ժամանակավոր կասեցումով կամ հետաձգումով համահունչ են ՊԱՄ-ին: Չնայած տարիքային, սեռային, առողջական, պաշտոնական կամ այլ պատճառներով նրանք անմիջապես չեն մասնակցում մարտական գործողություններին, սակայն սկզբունքորեն միասնական են ՊԱՄ-ին ու պատերազմի գաղափարին, անում են ամեն ինչ պատերազմը մարդկային ռեսուրսներով և բարոյահոգեբանական աջակցությամբ ապահովելու համար: Այսինքն՝ այս խումբը բուն ժողովուրդն է, որը ազգային արժեքներ, ազգային հատկանիշներ ու գաղափարներ, տվյալ դեպքում միաժամանակ և պատերազմ կրողն է:

[3] Պատերազմի ոչ մասնակիցները, ելնելով առաջին հերթին իրենց մեջ գերակայող անձնական հատկանիշներից, կրոնական կամ այլ պատճառներից, դերհզոր պատերազմական սթրեսների ազդեցության տակ հրաժարվում են պատերազմին մասնակցելուց՝ բացառելով անձնազոհությունն ու գերհզոր զգացմունքների և ցանկությունների ժամանակավոր կասեցումն ու հետաձգումը կամ չկարողանալով դիմակայել գերհզոր պատերազմական սթրեսներին՝ հրաժարվում են պատերազմին մասնակցելուց, հնարավորության սահմաններում հեռանալով ռազմական թատերաբեմից: Այսինքն՝ այս խմբի մեջ մտնում են նրանք, որոնք անհարգելի պատճառներով խուսափում են ազգապաշտպան պատերազմից:

[4] Պատերազմի ոչ լիարժեք մասնակիցների մեջ անձնազոհության կամ գերհզոր ցանկությունների ժամանակավոր կասեցման կամ հետաձգման որոշակի տարբեր առկա են, չեն բացառվում, սակայն գերակա են անձնական, շահագիտական, հատկապես փառասիրական ու իշխանատենչության հատկանիշները: ՊՈԼՄ-ն ավելի հաճախ պաշտոնատար անձ կամ իշխանավոր է: Չեն բացառվում, իհարկե, շարքային մարդիկ, որոնք անգամ պատերազմի պայմաններում, ՊԳՍ-ների ազդեցության տակ չեն դադարում իրենց անձնական նպատակներն իրագործելուց, իսկ հետպատերազմյան շրջանում, յուրացնելով պատերազմի մասնակցի հեղինակությունը, հետամուտ են լինում սեփական նպատակների իրագործմանը՝ այդ ճանապարհին բացառելով կամ դուրս մղելով ՊԱՄ-ին:

Լրաբեր 1–3

ցուցաբերում է գերզգայունակություն և հետպատերազմյան շրջանում չհանդիպելով պետության և հասարակության պատշաճ վերաբերմունքին, արագ ու ուժեղ ենթարկվում է ֆրուստրացիայի:

ՊՈՄ-ը, ելնելով անձնական կարողություններից ու հատկանիշներից, չկարողանալով /նաև չցանկանալով/ դիմագրավել ՊԴՍ-ներին, հրաժարվում է ազգային գաղափարների ու նպատակների իրագործումից, ընդարմանալով դիմում է ինքնամեկուսացման կամ պարզապես փախուստի՝ մոռանալով սեփական հավատարմությունն ու պատկանելությունն ազգային արժեքներին, իսկ ՊՈԼՄ-ի մեջ անձնական շահերի ու խնդիրների գերակայության հետևանքով ազգային արժեքներին նվիրվածությունն ու հավատարմությունը մղվում են հետին պլան կամ նպատակասլաց օգտագործվում անձնական խնդիրների ու նպատակների իրագործման համար:

Երկրի համար ճակատագրական պահին ՊՈՄ-ի՝ պատերազմին չմասնակցելը՝ փախուստը, անհետևանք չի մնում ոչ միայն իր, այլև նրա հարազատների համար, որոնք ամիսներ կամ տարիներ շարունակ գտնվում են հոգեկան ընկճվածության, անհարմարության զգացումի, մեկուսացման մեջ, որն էլ իր արտահայտությունն է գտնում հետագա ՀՊՀ-ում, հատկապես ՊԱՄ-ի նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքում: ՊՈՄ-ի մեջ բացառվում են անձնազոհությունն ու զրկանքներին դիմակայելու ունակությունը, այսինքն՝ հայրենասիրությունը և տղամարդկությունը՝ Դա իր կնիքն է դնում նրա հոգեկանում, նրա մեջ ծնում անլիարժեքության բարդույթ, որը տևում է շատ երկար՝ մշտապես իր արտահայտությունը գտնելով նրա և ՊԱՄ-ի հարաբերություններում, ստեղծելով վերջինիս հանդեպ քողարկված կամ ակնհայտ բացասական վերաբերմունք՝

Ի տարբերություն ՊՈՄ-ի, ՊՈԼՄ-ը կարող է ցուցաբերել անձնազոհության և զրկանքներին դիմակայելու որոշակի տարրեր, այնքան, ինչքան պետք է իր անձնական նպատակների ու խնդիրների իրագործման համար: Լավ հասկանալով, որ պաշտոնատար անձի քաղաքական կշիռը պատերազմի ժամանակ կամ հետպատերազմյան շրջանում որոշվում է այն ավանդով, որ վերջինս ունի պատերազմում և հատկապես հաղթանակի ապահովման գործում, ՊՈԼՄ-ն անում է ամեն ինչ՝ պատերազմը, հատկապես հաղթանակը կրողի հեղինակությանը տիրանալու համար: Այդ տեսանկյունից նա բացառում է իր շրջապատում ՊԱՄ-ի առկայությունը, քանի որ, հակառակ դեպքում, անհնար է ներկայանալ որպես պատերազմը, հատկապես հաղթանակը կրող: Շահերի որոշակի ընդհանրության պատճառով ՊՈԼՄ-ը և ՊՈՄ-ը շատ արագ մտնում են համագործակցության մեջ, որն էլ շատ ծանր է անդրադառնում հասարակության, նրա բարոյական արժեքների վերագնահատման գործընթացի վրա:

Պատերազմի նկատմամբ իրենց ցուցաբերած վերաբերմունքով կամ ՊԴՍ-ների ազդեցությամբ հասարակության տարանջատումը, մասնատումը և հիմնական խմբերի առկայությունը /ՊԱՄ, ՊՈԱՄ, ՊՈՄ, ՊՈԼՄ/ օբյեկտիվ իրականություն է, որն իր կնիքն է թողնում հասարակության բոլոր շերտերի վրա, իսկ դա անտեսել չի կարելի՝

ՀՊՀ-ի տեսությունը մեկնաբանում է, թե ինչպես, մի դեպքում, ՊԴՍ-ի ազդեցության տակ ավելի են խորանում հավատարմությունն ու նվիրվածությունը մարդկային վեհ, այդ թվում՝ ազգային և պատմական արժեքներին, մյուս դեպքում, թե ինչպես են ի հայտ դալիս մարդկային ու անգամ կենդանական բնազդները: Ցանկացած պատերազմ ուղեկցվում է մարդու կողմից մարդու նկատմամբ

անմարդկային վերաբերմունքի բազմաթիվ դրսևորումներով: Եվ ինչքան էլ պարադոքսային թվա, հենց պատերազմը, երբ ՊԴՍ-ի ազդեցության տակ մերկացվում են մարդկային հնարավոր բոլոր արատներն ու կենդանական բնազդները, թույլ է տալիս ժխտելու մարդու մեջ ագրեսիայի, որպես նրան բնորոշ կայուն հատկանիշի առկայությունը: Իսկ մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի դրսևորումները բացատրվում և հիմնավորվում են որպես մարդկային հատկանիշների, միջավայրի, իրավիճակի որոշակի համադրություն ու ՊԴՍ-ի ազդեցության զուգորդման արդյունք, երբ այդ բոլորը միասին, հաղթահարելով մարդկային բանականության պատնեշը, գործում են ազատ ու անարգել: Այդ դրսևորումներն իրական կյանքում առավել հաճախ ընկալվում են որպես մարդուն յուրահատուկ, բնորոշ հատկանիշ՝ չլինելով այդպիսին, խեղաթյուրելով ճշմարտությունը, դառնալով պարզապես սխալ ընկալման և գնահատման արդյունք: Դրանք դադարում են զուտ տեսական հարցեր լինելուց և դառնում են մարդկության առաջ ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը՝ կապված այն բանի հետ, թե մարդկային հասարակությունն իր հետագա զարգացման ընթացքում ո՞ր ուղղությունները կնախընտրի:

ՀՊՀ-ի տեսության համաձայն, ՊԴՍ-ների ազդեցության ներքո, ավելի ճիշտ՝ դրանց հետ զուգակցված, խորանում և ուժեղանում է հակումը կրոնական, կուսակցական, աղանդավորական և պաշտամունքի այլ ձևերի նկատմամբ, մինչև իսկ նրանց մոլեռանդ և ծայրահեղ ձևերի ի հայտ գալը: Դա մի անգամ ևս ապացուցեց Ղարաբաղյան պատերազմը /օրինակները բազմաթիվ են/: Հարցի էությունն այն է, որ ՊԴՍ-ն, թափանցելով մարդկային հոգեբանություն, ազդելով նրա բոլոր մակարդակների վրա տևական ժամանակով, վերջին հաշվով, առաջացնում է գիտակցական վերահսկողության խիստ անկում, որի արդյունքը կրոնական, կուսակցական, աղանդավորական և պաշտամունքի այլ ձևերի էլ առավել գերիշխող վիճակի ստեղծումն է, որը զուգորդվում է ընկալունակության և քննադատական կարողության նվազումով: Ավելին, հավատի ու պաշտամունքի ձևերի նման խտացումն ուղեկցվում է մոլեռանդությամբ, մնացածների հանդեպ անհանդուրժողականությամբ՝ դառնալով մարդկային հասարակության չարիքներից մեծագույնը:

ՀՊՀ-ի տեսությունը ուսումնասիրում և պարզաբանում է այն մեխանիզմները, որոնց միջոցով ՊԴՍ-ն, ազդելով հասարակության վրա, առաջ է բերում խորը տեղաշարժեր, ճշտում է այդ ազդեցության շրջանակներն ու խորությունը և դրանց հետևանքով առաջացած սոցիալ-տնտեսական, հասարակական հարաբերությունների փոփոխությունները, որոնք հաջորդում են այդ ազդեցությանը: Պատերազմը և հատկապես հաղթանակը տնտեսապես թույլ կամ պատերազմի հետևանքով թուլացած ու բարոյական ոչ շատ բարձր արժեքներով օժտված հասարակությունում կրում են ներքին հակասությունների զարգացման ու տրոհման մի այնպիսի անսպառ էներգիա, որը ծագելով ու զարգանալով ՊԴՍ-ի ազդեցության տակ, հանգեցնում է պետություն փլուզման սպառնալիքին կամ պարզապես փլուզմանը:

Յուրաքանչյուր ժողովրդի համար և ցանկացած պատմական ժամանակաշրջանում, հատկապես փոքրաքանակ և առանձնահատուկ աշխարհաքաղաքական տարածաշրջանում գտնվող ժողովրդի համար ազգային միասնությունը գոյության պայքարի, գոյատևման միակ և անփոխարինելի ձևն է: Այդպես է եղել թե՛ Ավարայրի ճակատամարտի ժամանակ, թե՛ 1915-1920թթ., այդպես է

առանձնապես այսօր: Այն միշտ դասվել է ազգային արժեքների շարքին: Եվ հայ ժողովրդի համար ազգային միասնության դաղափարը պետք է բարձրանա ազգային գաղափարախոսության մակարդակին՝ դառնալով համընդհանուր կեցության ձև: Հետևաբար, ցանկացած խոսք կամ քայլ, ուղղված այդ միասնության դեմ, պետք է դատապարտվի և արժանի հակահարված ստանա՝ ստեղծելով անհանդուրժողականության մթնոլորտ այդ միասնությունը խաթարողների դեմ, որպեսզի այն դառնա ժողովրդին համախմբող կարևորագույն գործոն: Նման պարագայում ամենատարբեր մակարդակի բազմաթիվ պետական, քաղաքական գործիչներ, կուսակցապետեր կնետվեն քաղաքական աղբանոցը կամ պարզապես կմերժվեն հասարակությունից, որով ազգը կապրի ինքնամաքրում՝ ընթանալով բնականոն զարգացման միակ ուղիով: Հասարակությունն անցումային շրջանում շատ զգայուն է ազգային ու բարոյական արժեքների նկատմամբ, բավական է մի սեպ խրել, և բացասական հետևանքները երկար սպասել չեն տա: Իսկ նման առողջ անհանդուրժողականությունը կկասեցնի վտանգավոր զարգացումները: Այսպիսին է ՀՊՀ-ի գլխավոր եզրակացությունը:

ПОСТВОЕННЫЙ СИНДРОМ И ОБЩЕСТВО

АГАБАЛЯН В.Р.

Резюме

Теория поствоенного синдрома пытается выявить и объяснить, как в одном случае под влиянием сильнейших стрессов войны углубляются приверженность и преданность высшим человеческим ценностям, в том числе национальным и историческим, а в другом – выявляются человеческие пороки, вплоть до регрессирующих животных инстинктов. Теория дает возможность рассматривать человека сквозь призму сильнейших стрессов войны, узреть скрытые в его психологии пороки и инстинкты, которые, пребывая в регрессивном и подавленном состоянии, выявляются под воздействием сильнейших стрессов войны.